



Հետաքրքիր է իմանալ

Երկրագնդի ջերմային գոտիների հասարակածի նկատմամբ համաշափ դասավորվածությունը կարող է հիմք տալ ենթադրելու, որ հասարակածից հավասար չափով դեպի հյուսիս և դեպի հարավ հեռացված փարածքներում (Օրինակ, 30⁰ հյուսիսային լայնության և 30⁰ հարավային լայնության փիրոյթներում) փարեկան միջին ջերմաստիճանը պետք է նույնը լինի: Պարզվում է՝ դա այդպես չէ: Հյուսիսային կիսագնդում օդի միջին փարեկան ջերմաստիճանը մի փոքր ավելի բարձր է, քան հարավային կիսագնդում: Ամենաբարձր միջին փարեկան ջերմաստիճանը դիտվում է ոչ թե աշխարհագրական հասարակածում, այլ 10⁰ հյուսիսային լայնության փիրոյթում: Այս անհամաչափությունը պայմանավորված է մի քանի պարձառով: Նախ, հյուսիսային կիսագնդի ցամաքի մակերեսը երկու անգամ մեծ է հարավային կիսագնդի ցամաքի մակերեսից: Երկրորդը, Գարունն ու ամառը հյուսիսային կիսագնդում մի շաբաթով ավելի երկար են տևում, քան հարավային կիսագնդում: Սրա պարձառը Արևի շուրջը Երկրի պտտման արագության փոփոխությունն է: Երկիրը Արեգակին մոտ դիրքերում ավելի արագ է շարժվում: Իսկ Արեգակին ամենամոտ դիրքին Երկիրը հասնում է Հունվար ամսին, երբ հարավային կիսագնդում ամառ է, իսկ հյուսիսային կիսագնդում՝ ձմեռ: Եթե Երկիրն արագ է շարժվում, նշանակում է հարավային կիսագնդում շուրջ էլ ամառն անցնում է, իսկ հյուսիսային կիսագնդում ձմեռն է շուրջ անցնում: Սրացվում է, որ տաք օրերի քանակը միջինում հյուսիսային կիսագնդում ավելի շատ է, քան հարավայինում: Կա ևս մեկ պարձառ. հարավային կիսագնդում է գրավում Անտարկտիդա մայրցամաքը՝ հավերժական սառույցների աշխարհը, որ փարեկան միջին ջերմաստիճանը մոտավորապես - 60⁰ C է: